

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ  
ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետրուիական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետը, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 46-րդ կետի 12-րդ ենթակետը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանի հավելվածի 5-րդ կետը, գիտական խորհրդի 2016 թվականի ապրիլի 29-ի թիվ 06 որոշմամբ հաստատված Մագիստրատուրայի կանոնակարգը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

-

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) մագիստրատուրայի ընդունելության անցկացման նպատակով ստեղծել ընդունող հանձնաժողով և հաստատել կազմը՝ համաձայն հավելվածի:

2.Սահմանել Համալսարանի 2023-2024 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության հետևյալ ժամկետները.

1) «Ֆարմացիա» մասնագիտությամբ՝

ա. Համալսարանի և այլ բուհերի բակալավրի կրթական ծրագրով «Ֆարմացիա» մասնագիտությամբ շրջանավարտների դիմումներն ընդունվում են երկու փուլով՝

• I փուլ - 2023թ. հունիսի 19-ից մինչև հուլիսի 06-ը.

• II փուլ - 2023թ. հուլիսի 07-ից մինչև օգոստոսի 23-ը.

բ.Այլ բուհերի երկրորդ փուլի ընդունելության միջառարկայական համակարգչային թեստային քննության օր սահմանել՝ 2023թ. օգոստոսի 25-ին ժամը 10<sup>00</sup>, (փորձնական քննության օր սահմանել՝ 2023թ. օգոստոսի 24-ին ժամը 10<sup>00</sup>).

2) «Հանրային առողջություն և առողջապահություն» և «Բիզնես վարչարարություն» մասնագիտություններով՝

ա. Համալսարանի և այլ բուհերի շրջանավարտների համար դիմումներն ընդունվում են երկու փուլով՝

• I փուլ – 2023թ. հունիսի 19-ից մինչև հուլիսի 06-ը.

• II փուլ - 2023թ. հուլիսի 07-ից մինչև օգոստոսի 29-ը.

բ.«Հանրային առողջություն և առողջապահություն» և «Բիզնես վարչարարություն» մասնագիտությունների հարցազրույցի օրեր սահմանել 2023թ. օգոստոսի 25-ին, 28-ին, 29-ին:

3.Հանձնարարել Համալսարանի ուսումնամեթոդական վարչությանը՝ ապահովել սույն հրամանի կատարումը:

**ՌԵԿՏՈՐ**

**ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Հավելված  
«Երևանի Մխիթար Հերացու անվան  
պետական բժշկական համալսարան» հիմնադրամի  
ռեկտորի 2023 թվականի հունիսի -ի թիվ Մ - հրամանի

**ԿԱԶՄ**  
**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

1. Ավետիսյան Լարիսա Ռաֆայելի - նախագահ, ուսումնական  
աշխատանքների գծով պրոռեկտոր.

**Հանձնաժողովի անդամներ՝**

2. Հայրապետյան Մարինե Գրիշայի - ուսումնամեթոդական վարչության  
պետ.
3. Ենոքյան Բագրատ Զանիկի - դեղագիտական ֆակուլտետի դեկան.
4. Հովհաննիսյան Մարինե Գևորգի - հանրային առողջության ֆակուլտետի  
դեկան